

Տեղեկացնում ենք, որ ս. թ. հուլիսի 14-15-ը Բուլղարիայի Սոֆոպոլ քաղաքում կայանալու են «Աշխարհի ժողովուրդները» բարեգործական տոնավաճառը և «Սոֆոպոլն ու Մուսաները՝ Եվրոպայում և աշխարհում գործընկերության բանալին» խորագրով ֆորումները, որոնք կանցկացվեն «Muzite» արվեստների XIV միջազգային երիտասարդական փառատոնի շրջանակներում: Տոնավաճառին, որը կազմակերպում է «Երեխաների հրաշալիքները» բուլղարական բարեգործական հիմնադրամը, կներկայացվեն տարբեր ժողովուրդների բանահյուսությունը, գրականությունն ու արվեստը, ավանդական խոհանոցն ու կենցաղը: Միջոցառումից գոյացած ամբողջ հասույթը կտրամադրվի սոցիալապես անապահով և հաշմանդամ երեխաներին և երիտասարդներին:

Միջոցառումների մասին մանրամասն տեղեկատվություն կարելի է ներբեռնել www.muzite.org, muzite_fest@abv.bg, fest@muzite.org կայքէջից, ինչպես նաև ներկայացնում ենք միջոցառումների կազմակերպիչների կոնտակտային տվյալը՝ [Tel:+359 888 512 996](tel:+359888512996):